ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՏԻԺՆԵՐ SAR 7 ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԶԵԿՈՒՅՑ

Կանխիկ դրամական օգնության և CalFresh նպաստների համար

Օգնությու՞ն է հարկավոր: Զանգահարեք վարչական շրջանի գրասենյակ:

- Եթե Դուք չուղարկեք ավարտուն զեկույց, ներառյալ, բայց չսահմանափակվելով, SAR 7 ձևի բոլոր հարցերին պատասխանելը և պահանջի դեպքում հիմնավորող փաստաթղթեր կցելը, Ձեզ հատկացվող նպաստները կարող են հետաձգվել, փոխվել կամ դադարեցվել: **Անհրաժեշտության դեպքում կցեք առանձին թերթ:**
- Ձեր զեկուցած փաստերը կարող են հանգեցնել նպաստների ավելացման, նվազեցման կամ դադարեցման:
- Ձեր ավարտուն զեկույցն ուղարկեք մինչև զեկույցի ամսվանը հաջորդող ամսվա 5-րդ օրը: 11-րդ օրից հետո ուշ կլինի:

Օրինակներ

Եկամուտ

- ռոճիկներ
- արձակուրդային վճար
- տնային աջակցության ծառայություններ (IHSS)
- երեխայի կամ ամուսնու ապրուստավճար
- ապահովագրությունից կամ դատական կարգավորումներից ստացվող գումարներ
- վարձակալությունից ստացվող եկամուտ և վարձի վճարման օգնություն
- կառավարության կողմից հատկացված նպաստներ
- անաշխատունակության պետական փոխհատուցում
- ինքնազբաղվածություն
- թեյավճարներ
- տոկոսներ կամ շահաբաժիններ
- գործադուլավորներին տրվող նպաստներ
- հարկի վերադարձումներ
- գործազրկություն
- սոցիալական ապահովագրություն
- սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտ կամ լրացուցիչ նահանգային վճար (SSI/SSP)
- աշխատավարձ
- եկամուտ բնամթերքի տեսքով, օրինակ՝ վաստակած բնակարան, անվճար բնակարան, կենցաղային ծառայություններ, հագուստ կամ սննդամթերք
- մոլեխաղերի կամ վիճակախաղերի շահումներ
- կանխիկ փող, նվերներ, վարկեր, կրթաթոշակներ
- անաշխատունակության կամ կենսաթոշակի այլ մասնավոր կամ պետական փոխհատուցումներ
- արտադրական վնասվածքի փոխհատուցում
- վետերանների նպաստներ և երկաթուղայինների կենսաթոշակային ապահովման վճարներ

Գույք

- շարժիչավոր փոխադրամիջոցներ
- EBT կանխիկ դրամական օգնության մնացորդ
- տուն
- ընթացիկ չեկային հաշիվ
- խնայողական պարտատոմսեր
- հող
- խնայողական հաշիվ
- կյանքի ապահովագրական վկայագրեր
- խնամառության հանձնված գույք

Բնակարանային ծախսեր

- վարձավճար
- կենցաղային ծառայություններ
- գրավադրման փոխառություն
- տնատերերի ապահովագրություն
- գույքահարկեր
- աղբահանության վճարներ

Ծախսեր

- բժշկական ծախսեր
- առողջության ապահովագրության վճարներ
- երեխայի կամ խնամարկյալի խնամք
- քոլեջի ուսման վարձ և ուսումնական պիտույքներ
- դպրոցի պարտադիր վճարներ
- երեխայի կամ ամուսնու ապրուստավճար
- փոխադրումներ
- հանրակացարան
- բնակարանային ծախսեր

Համախառն եկամուտը նշանակում է գումարը նախքան պահումներ կատարելը (պահումների օրինակներ են՝ հարկեր, սոցիալական ապահովության կամ այլ կենսաթոշակային մուծումներ, առողջապահական ապահովագրավճարներ, աշխատավարձի վրա դրված կալանքներ և այլն):

Տուգանքներ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Եթե միտումնավոր չհետևեք կանխիկ դրամական օգնության կանոններին, Ձեր կանխիկ դրամական օգնությունը կարող է որոշ ժամանակով նվազեցվել, և Դուք կարող եք տուգանվել մինչև $10,000 և (կամ) ազատազրկվել կամ բանտարկվել մինչև 3 տարի ժամկետով:

Ձեր կանխիկ դրամական օգնությունը կարող է դադարեցվել՝

- ոչ բոլոր փաստերը զեկուցելու կամ սխալ փաստեր հայտնելու համար. 6 ամիս առաջին հանցանքի դեպքում, 12 ամիս՝ երկրորդ հանցանքի, կամ ընդմիշտ՝ երրորդի դեպքում.
- միևնույն ժամանակաշրջանում մեկից ավելի գործով օգնություն ստանալու նպատակով մեկ կամ ավելի դիմում ներկայացնելու համար. 2 տարի առաջին դատապարտման դեպքում, 4 տարի՝ երկրորդի, և ընդմիշտ՝ երրորդի դեպքում.
- օգնություն ստանալու նպատակով հանցավոր խարդախության համար դատապարտվելու համար. 2 տարի՝ $2,000-ը չգերազանցող գումարների դեպքում, 5 տարի՝ $2,000-ից մինչև $4,999.99 գումարների դեպքում, և ընդմիշտ՝ $5,000 կամ ավելի մեծ գումարների դեպքում.
- ընդմիշտ՝ միաժամանակ երկու կամ ավելի վարչական շրջաններում օգնություն ստանալու նպատակով վարչական շրջանին մշտաբնակությունը հաստատող կեղծ փաստաթղթեր ներկայացնելու, վարչական շրջանին անհիրավունակ երեխայի կամ գոյություն չունեցող երեխայի մասին սխալ փաստեր տրամադրելու, խարդախության միջոցով $10,000-ից ավելի դրամական նպաստներ ստանալու, ընդհանուր իրավասության դատարանի կամ վարչական լսումների կողմից խարդախության համար երրորդ անգամ դատապարտվելու համար:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ CALFRESH ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Եթե միտումնավոր չհետևեք CalFresh ծրագրի կանոններին, Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել 12 ամսով առաջին խախտման դեպքում, 24 ամսով՝ երկրորդի, և ընդմիշտ՝ երրորդի դեպքում: Դուք կարող եք տուգանվել մինչև $250,000 և (կամ) ազատազրկվել կամ բանտարկվել 20 տարի ժամկետով:

Եթե ընդհանուր իրավասության դատարանի կամ վարչական լսումների կողմից մեղավոր ճանաչվեք, որովհետև՝

- CalFresh նպաստները փոխանակել եք հրազենի, զինամթերքի կամ պայթուցիկ նյութերի հետ կամ վաճառել եք դրանք ձեռք բերելու նպատակով, ապա Ձեր CalFresh նպաստները կարող են ընդմիշտ դադարեցվել առաջին խախտման դեպքում.
- CalFresh նպաստները փոխանակել եք վերահսկվող նյութերի հետ կամ վաճառել եք դրանք ձեռք բերելու նպատակով, ապա Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել 24 ամսով առաջին խախտման դեպքում, և ընդմիշտ՝ երկրորդի դեպքում.
- փոխանակել կամ վաճառել եք CalFresh նպաստներ, որոնք արժեին $500 կամ ավելի, ապա Ձեր CalFresh նպաստները կարող են ընդմիշտ դադարեցվել.
- ինքնությունը հաստատող կեղծ փաստաթուղթ կամ մշտաբնակության վերաբերյալ կեղծ տեղեկություններ եք տրամադրել վարչական շրջանին, որպեսզի կարողանաք CalFresh նպաստներ ստանալ միաժամանակ մեկից ավելի գործով, ապա Ձեր CalFresh նպաստները կարող են դադարեցվել 10 տարով: